ԵԴ2/38037/02/23

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**20.11.2023թ.** **ք.Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ռ.Մ.Բունիաթյանի, ծանոթանալով «Երևան Տեքստիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումին ընդդեմ «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Երևան Տեքստիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 15.11.2023 թվականին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը դատավորի աշխատակազմին է հանձնվել 20.11.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Ներկայացված հայցադիմումում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների պահանջները:

Ուսումնասիրելով հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ դատարանը գտնում է, որ առկա է սույն գործի լուծման էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզման անհրաժեշտություն, ուստի գտնում է, որ գործը պետք է քննել դատական նիստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծանուցման կարգի վերաբերյալ նախատեսված առանձնահատկությունները և հաշվի առնելով գնումների հետ կապված վեճերը քննելու սեղմ դատավարական ժամկետները՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ծանուցումներն անհրաժեշտ է իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ դատական ծանուցագրերն ու դատավարական փաստաթղթերն ուղարկելով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստերին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.9-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Երևան Տեքստիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և հրավիրել նախնական դատական նիստ՝ 2023 թվականի դեկտեմբերի 11-ին, ժամը 15:00-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում (Արաբկիր նստավայր, ք.Երևան, Հ.Ներսիսյան 10):

2. Որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ